ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ՝ ՆԱՐԵ ԷԴԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 5 ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԿԱՊԱՆ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

Բաժին 1

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ

1.1 «Մեթոդ» հասկացությունը…….4

1.2 Ուսուցման ժամանակակից մեթոդները.....4–5

1.3 Ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդների հակադրումը……5

Բաժին 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Հետազոտական աշխատանքի նպատակը, մեթոդների ընտրությունը, ընթացքը……. 6–12

2.2 Հետազոտության արդյունքների վերլուծություն…….13–14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ …….15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..16

ՀԱՎԵԼՎԱԾ.....17–24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ դասավանդման համար մերօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն,այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն։

Ինչ սովորեցնելը,ինչու սովորեցնելը և ինչպես սովորեցնելը դասավանդման երեք կարևոր հիմնախնդիրներն են։Առաջինը ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական արժեք ՝ գիտելիք,մատուցվում է սովորողներին,երկրորդը՝ ինչու սովորեցնելը, կրթության բովանդակությունը կազմող կարողություններ,հմտություններ և արժեհամակարգ բաղադրիչների միջոցով շեշտադրում է ինչ սովորեցնելու նպատակը,երրորդը՝ ինչպես սովորեցնելը, պայմանավորում է դասավանդման եղանակը,միջոցներն ու ձևերը։

Նոր և շատ մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար։ Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական ձեռնհասությունը, ինչը ենթադրում է մասնագիտական լուրջ պատրաստություն,փորձառություն,նաև անձնային որոշակի որակներ։

Ուսուցման մեթոդները կարելի է ընկալել նաև որպես դեղատոմս։ Երբեմն ասում ենք,որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։Ամեն դաս,ամեն դասարան տարբեր է։Մի դասարանում արդյունքի հասնող մոտեցումը կարող է մի դասարում չաշխատել։Ուստի՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ,որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։

Մեթոդն արդյունավետ է , երբ մեթոդին կից օգտագործվող հնարները բազմազան են։

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ

1.1«Մեթոդ» հասկացությունը

«Մեթոդ»–ը հունարենից փոխառված բառ է և նշանակում է ինչ–որ նպատակի հասնելու,խնդիր լուծելու եղանակ, իրականության տեսական կամ գործնական յուրացման հնարների միագումար,իսկ բառացի թարգմանությամբ՝ ինչ–որ տեղ տանող ճանապարհ։Մեթոդը խնդրահարույց հարցերով բարդ և բազմակողմանի հասկացություն է։Այն ուսուցչի և աշակերտի համագործակցության ձև է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը։ Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում,սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ լինել։ Այն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը,տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները։

Ուսուցման որևէ մեթոդ, հնար կամ վարժություն չի կարող միակ ճշմարիտը համարվել։

1.2 Ուսուցման ժամանակակից մեթոդները

Ուսուցման ժամանակակից մեթոդները մեթոդներ են, որոնք խրախուսում են սովորողներին ակտիվ մտածել և զբաղվել ուսումնական նյութի յուրացման գործընթացում։Դրանց առանձնահատկություններն այն են, որ հիմնված են գործնական և մտավոր գործունեության մոտիվացիայի վրա, առանց որի առաջընթաց չկա գիտելիքների յուրացման գործում։

Իմ դասերի ընթացքում հաճախ եմ կիրառում ժամանակակից մեթոդներ,որոնք թույլ են տալիս ինձ հաջողությամբ իրականացնել աշակերտակենտրոն ուսուցման

սկզբունքները: Դասի խնդրահարույց իրավիճակը,սովորողներին տրված խնդրահարույց հարցերը սովորեցնում են վերլուծել:
Ժամանակակից մեթոդների և հնարների կիրառությունը բարելավվում է սովորողների՝ իրենց դիրքորոշումն արդարացնելու ունակությունը,դաստիարակում է հարգանք ուրիշի տեսակետի նկատմամբ,ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը,ավելացնում է ստեղծագործական աշխատանքների թիվը,ուսուցիչը պատրաստի գիտելիք չի տալիս, երեխաներն իրենք են բացահայտում դրանք:

1.3 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒՄԸ

Վերջին տարիներին հաճախ են հակադրվում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները,ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները:Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները ավելի լավն են,իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:
Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու,ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:Հարց ու պատասխանը,նյութը վերհիշելը,վարժանքները,ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են և անհրաժեշտ ուսուցման համար:
Ինտերակտիվ ուսուցումն էլ ունի որոշակի ռիսկեր,որոնք անտեսել չի կարելի:Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ կարող են «գլուխ պահել»:Արտաքուստը թվում է՝ երեխաներն ակտիվ են:Վերջում պարզվում է՝ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:
Այժմ կարելի է եզրակացնել,որ նոր մանկավարժության մեջ չի կարելի հակադրել մեթոդները և հնարները:Դրանք բոլորն էլ ինչ–որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները կարելի է ընկալել նաև որպես դեղատոմս։ Երբեմն ասում ենք,որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։Ամեն դաս,ամեն դասարան տարբեր է։Մի դասարանում արդյունքի հասնող մոտեցումը կարող է մի դասարում չաշխատել։Ուստի՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ,որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը։Մեթոդն արդյունավետ է, երբ մեթոդին կից օգտագործվող հնարները բազմազան են։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2..1 Հետազոտական աշխատանքի նպատակը, մեթոդների ընտրությունը, ընթացքը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումը «Մայրենի» առարկայի դասաժամերին ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման դեպքում,սովորողներին ներգրավել խմբային հետազոտական ակտիվ աշխատանքի մեջ։

Այս նպատակին հասնելու համար, առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

- Ուսուցման մեթոդների դասակարգման մասին տեսական մոտեցումներրի վերլուծում
- Ուսուցման ժամանակակից մեթոդների նկարագրության ներկայացում
- Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում՝ ուսումնական գուրծընթացի արդյունավետությունը բաձրացնելու նպատակով։

Հետազոտության մեթոդները։ Փորձարարական հետազոտության ժամանակ օգտագործվել են «Վենի դիագրամ»–ի, «մտագրոհ»-ի, «կենտրոններով աշխատանք»-ի մեթոդները։

Հետազոտությունը իրականացվել է « Կապանի թիվ 5 դպրոց» ՊՈԱԿ-ի 6–րդ «ա» և 6–րդ «գ» դասարաններում։

Փորձարարական հետազոտության *նպատակն է* դիտարկել սովորողի ներգրավվածության աստիճանը դասաժամերին և ցույց տալ դրա փոփոխությունը ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման դեպքում։

Հետազոտությունը իրականացվել է Ստեփան Զորյանի «Մի կյանքի պատմություն»,Հովհաննես Շիրազի «Հորս հիշատակին»,Վարդգես Բաբայանի «Աստղեր»,Վախթանգ Անանյանի «Անձրև» ստեղծագործությունների հիման վրա։

Առաջինը գործածել եմ «Կենտրոններով աշխատանք» մեթոդը 6–րդ «ա» (20 աշակերտ) և 6–րդ «գ»(24 աշակերտ) դասարաններում։6–րդ «գ» դասարանը բաժանել եմ 6 հոգուց բաղկացա4 խմբի,իսկ 6–րդ «ա» դասարանը՝ 5 հոգուց բաղկացած 4 խմբի՝ «բացահայտողներ»,«հետազոտողներ»,«ստեղծագործողներ»,«գրավոր աշխատանքի կենտրոն»։

Առաջին խմբի՝ «բացահայտողների կենտրոնի» մասնակիցները ընթերցեցին դասը,կատարեցին նշումներ,վեր հանեցին նյութի հիմնական միտքը,և աշխատանքի ավարտին ներկայացրին ընկերներին։

6–րդ «ա» դասարանում ըստ աշակերտների՝ հիմնական միտքն էր՝«Եկեղեցու զանգերի ղողանջը ավետում էին նորածնի հայտնի դառնալու լուրը»։Նույն միտքը արտահայտեցին նաև 6–րդ «գ» դասարանի աշակերտները։

Երկրորդ խմբի՝ «հետազոտողների կենտրոնի» մասնակիցները, օգտվելով համացանցից, հավաքեցին տեղեկություններ Ստեփան Զորյանի մասին և ներկայացրին ընկերներին։Երկու դասարաններում էլ կատարեցին նմանատիպ աշխատանք։

Երրորդ խմբի՝ «ստեղծագործողներ կենտրոնի» մասնակիցները,ելնելով տեքստի առանձնահատկությունից, ստեղծեցին պաստառ(6-րդ «գ» դասարան) և գեղեցիկ նկարազարդում(6–րդ «ա»)։

Չորրորդ խումբը՝«գրավոր աշխատանք կատարողները»,ընթերցեցին տեքստը և կատարեցին բառային աշխատանք(աղյուսակի տեսքով)։Երկու դասարաններում էլ կատարեցին նույն աշխատանքը։Աշխատանքի ավարտին ներկայացրին ընկերներին։

ԲԱՌԸ	***ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ***
արշալույս	լուսաբաց, լուսադեմ
խորհրդավոր	առեղծվածային, անհասկանալի,
ավետել	բարի լուր հայտնել,ծանուցել
տատմեր	ծննդկանին առաջին օգնություն ցույց տվող փորձառու կին
հանգամանք	իրավիճակ, վիճակ, իրադրություն
բարուր	խանձարուր
մագիլ	ճանկ
ճարճատյուն	ճայթուն

Երկրորդ մեթոդը,որը կիրառել եմ նույն դասարաններում,«Վենի դիագրամ» մեթոդն է։Այն կիրառել եմ Հովհաննես Շիրազի «Հորս հիշատակին» և Վարդգես Բաբայանի «Աստղեր» ստեղծագործությունները ամփոփելիս։



Աշակերտները համեմատեցին երկու ստեղծագործությունները և գրառեցին ընդհանրություններն ու առանձնահատկությունները։Երկու դասարաններում էլ կատարեցին արդյունավետ աշխատանք։

Երրորդ մեթոդը՝ «մտագրոհը», իրականացրել եմ Վախթանգ Անանյանի «Անձրև» ստեղծագործությունը ուսումնասիրելիս։

1.ջուր

2.բնական երևույթ

3.տրամադրության փոփոխություն

4. կարկուտ

5.ամպրոպ

6.աշուն



Օգտագործելով վերը նշված մեթոդները՝ նպաստել եմ լեզվական կարողունակության,սովորել սովորելու կարողունակության,ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակության ձևավորմանը։Սովորողները կարողանում են գրավոր և բանավոր հաղորդակցվել մայրենի լեզվով,կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք։Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել,ըմբռնել,արտահայտել,ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր,փաստեր և կարծիքներ։Սովորել սովորելու կարողունակության շնորհիվ սովորողները ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները,ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն։Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները,սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում։Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ։Սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները։

2.2 Հետազոտության արդյունքների վերլուծություն

Համեմատվեց սովորողների ուսումնառության փոփոխություններն ու ներգրավվածության աստիճանը ինտերակտիվ մեթոդներ կիրառելիս:

ԴԵՂԻՆ ՄԱՆԴՂԱԿ–ԴԱՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՔԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ԿԱՊՈՒՅՑ ՄԱՆԴՂԱԿ–ԴԱՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ՀԵՏՈ



ԿԵՆՐՈՆՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՎԵՆԻ ԴԻԱԳՐԱՄ ՄՏԱԳՐՈՀ

Արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ուսումնառության աստիճանի բարձրացմանը և այն աշակերտները, ովքեր չէին մասնակցում ուսումնական գործընթացին ցուցաբերում են ակտիվություն։Դրա արդյունքում բարձրանում է ուսումնական գործընթացի արդյունավետության մակարդակը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարած հետազոտական աշխատանքը՝ կարելի է եզրակացնել, որ անձի մոտիվացիոն ոլորտի բաղկացուցիչ մաս է համարվում իմացական հետաքրքրությունը:

Կրթական համակարգում ներդրված ուսուցման ժամանակակից մեթոդները նպաստում են իմացական հետաքրքրությունների զարգացմանը :Ինտերակտիվ մեթոդների կիրառման արդյունքում սովորողները ակտիվ մասնակցում են ուսումնական գործընթացին, մեծանում է հետաքրքրությունը ուսումնական գարծունեության նկատմամբ:Դրանց շնորհիվ բարձրանում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ավանդական մեթոդներ կիրառելիս սովորողները ցուցաբերեցին ուշադրության և հետաքրքրության միջին մակարդակ: Մինչդեռ ժամանակակից մեթոդներ կիրառելիս սովորողները ցուցաբերեցին ուշադրության բարձր մակարդակ:

Ուստի՝ ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների հետաքրքրության աստիճանի բարձրացմանը և այն աշակերտները, ովքեր չէին մասնակցում ուսումնական գործընթացին ցուցաբերում են ակտիվություն: Դրա արդյունքում ուսումնական գործընթացի արդյունավետության մակարդակը աճում է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Խաչատրյան Ս. «Ուսուցման արդյունավետ հնարներ» 2020թ

2.Նալչաջյան Ա. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն » 1977թ.

3.Յու.Ա. Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան, Մանկավարժություն «Մանկավարժ» 2005

4.Ս.Սարուխանյան,Ա.Դալլաքյան,Ն.Դիշաջաղյան
«ՈՒսուցման ժամանակակիմեթոդներ,հնարներ,վարժություններ» 2008

Հավելված

Օրվա դասի պլան 1

Ուսուցչի անունը՝ Նարե Սարգսյան

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 6–րդ «ա»

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասին տեսակը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի թեման՝ Ստեփան Զորյան, «Մի կյանքի պատմություն»

Նպատակները՝

Ծանոթացնել հեղինակի կենսագրությանը

Գիտելիքներ հաղորդել ստեղծագործության ընդհանուր գաղափարի մասին

Ծանոթացնել ինքնակենսագրական տեքստի առանձնահատկություններին

Զարգացնել սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները արտահայտելու կարողունակությունը

Օգնել տարբերակելու ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր

Վերջնարդյունքը

Սովորողը կկարողանա՝

- արտահայտել սեփական մտքերը
- ընկալել ստեղծագործության կերպարային,տրամաբանական և զգայական միասնությունը

- վեր հանել զորյանական հերոսի միջավայրը, գործող անձանց հոգեվիճակները,զգացմունքներն ու մտքերը
- տեքստն օգտագործել ճանաչողական մտահորիզոնի ընդլայնման և սեփական կենսափորձի հարստացման նպատակով

Միջառարկայական կապ՝ կապեր ստեղծել պատմություն,աշխարհագրություն առարկաների հետ։

Խաչվող հասկացություններ՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Կայունություն և փոփոխություն

Ուսումնական նյութեր՝ Դասագիրք, տետր, առաջադրանքներ

Օգտագործվող հիմնական մեթոդը՝ Կենտրոններով աշխատանք

Դասի ընթացք

ԽԹԱՆՈՒՄ 10 ՐՈՊԵ

ԴԱՍԸ ՍԿՍԵԼ ԽԹԱՆՈՂ ՀԱՐՑԵՐՈՎ

1.Ի՞նչ գիտեք Ստեփան Զորյանի մասին։

2.Նրա ո՞ր ստեղծագործությունն է ձեզ ծանոթ։

3.Էլ ի՞նչ ինքնակենսագրական բնույթի ստեղծագործություններ գիտեք։

4.Ո՞ր աղոթքն է ձեզ ծանոթ,արտասանեք։

«ՄՏԱԳՐՈՀ» «ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌՈՎ։

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ 25 ՐՈՊԵ

Դասարանը բաժանել 6 հոգուց բաղկացած 4 խմբի՝ «բացահայտողներ»,«հետազոտողներ»,«ստեղծագործողներ»,«գրավոր աշխատանքի կենտրոն»։

Առաջին խմբի՝ «բացահայտողների կենտրոնի» մասնակիցները պետք է ընթերցեն դասը,կատարեն նշումներ,վեր հանեն նյութի հիմնական միտքը,և աշխատանքի ավարտին ներկայացնեն ընկերներին։Օրինակ՝ «Եկեղեցու զանգերի ղողանջը ավետում էին նորածնի հայտնի դառնալու լուրը»։

Երկրորդ խմբի՝ «հետազոտողների կենտրոնի» մասնակիցները, օգտվելով համացանցից,պետք է հավաքեն տեղեկություններ Ստեփան Զորյանի մասին և ներկայացնեն ընկերներին։

Երրորդ խմբի՝ «ստեղծագործողներ կենտրոնի» մասնակիցները,ելնելով տեքստի առանձնահատկությունից,պետք է ստեղծեն պաստառ կամ գեղեցիկ նկարազարդում,բեմականացում,երգ, պար։

Չորրորդ խումբը՝«գրավոր աշխատանք կատարողները»,պետք է ընթերցեն տեքստը և կատարեն բառային աշխատանք։

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ 10րոպե

Այս փուլում կիրառել «Վարդ,փուշ,բողբոջ» մեթոդը։

1.Նշել 1 բան.որ լավ հասկացաք։

2.Նշել 1 բան,որը սովորելիս դժվարության բախվեցիք։

3.Նշել 1 բան,որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ձագեց։

Վերջում կատարել ինքնագնահատում։

Տնային աշխատանք դասագրքից։Վերարտադրել բնագիրը։

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Ուսուցչի անունը՝ Նարե Սարգսյան

Առարկան՝ Հայոց լեզու

Դասարանը՝ 7–րդ «ա»

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասին տեսակը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի թեման՝ Թվական անուն,տեսակները

Նպատակները՝ 1., Ընդլայնել,խորացնել նախկին գիտելիքները թվականի մասին։

2. Ձևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություն։

3. Ձևավորել գեղարվեստական խոսք կազմելու կարողություն։

Վերջնարդյունքները՝

Սովորողները կիմանան՝

- թվականի սահմանումը, տեսակները, տարբերությունները
- թվականի որպես հատկանիշ արտահայտող խոսքի մաս լինելը
- թվականների տարբեր տեսակների կազմությունը և գրությունը

Սովորողները կկարողանան՝

- տարբերակել հատկանիշ և թվային իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից
- գործածել խոսքում առածներ, իմաստություններ թվականների գործածությամբ
- ճիշտ գրել և գործածել թվականները

Միջառարկայական կապ՝ կապեր ստեղծել պատմություն,աշխարհագրություն,մաթեմատիկա,գրականություն առարկաների հետ։

Խաչվող հասկացություններ՝

- Կայունություն և փոփոխություն
- Կառուցվածք և գործառույթ

Ուսումնական նյութեր՝ Դասագիրք,ուսումնական պաստառ, տետր, առաջադրանքներ

Օգտագործվող հիմնական մեթոդը՝ ԽԻԿ-Մտագրոհ, հետազոտական աշխատանք, զրույց-դասախոսություն, հասկացության քարտեզագրում

Դասի ընթացք

Խթանման փուլ (10 րոպե)

Գրատախտակին գրել «Տասը չափիր,մեկ կտրիր» առածը և ուղղորդված հարց տալ. «Ուրիշ ի՞նչ առածներ գիտեք թվականների գործածությամբ»: Բացատրել իմաստները, գրառել տետրերում:

Իմաստի ընկալման փուլ(25 րոպե)

Դասարանը բաժանել 4 խմբի:

Աշակերտներին բաժանել էջեր աշխարհագրության,պատմության,գրականության,մաթեմատիկայի դասագրքերից:

Համառոտ զրույցից հետո հանձնարարել կատարել «Հետազոտական աշխատանք»:Հետազոտության թեման՝ «Թվական անուն»: Աշակերտները պետք է դուրս գրեն և խմբավորեն թվականները:Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը:

Կշռադատման փուլ(10 րոպե)

Ձեռք բերված գիտելիքները «Հասկացության քարտեզագրում» մեթոդով համակարգել գրատախտակին:Բերել օրինակներ յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ:

Հարցերի միջոցով կատարել **անդրադարձ**, **գնահատել** (օրինակ՝ ինքնագնահատում):

Տնային աշխատանք հանձնարարել դասագրքի վարժություններից:

Օրվա դասի պլան 3

Ուսուցչի անունը՝ Նարե Սարգսյան

Առարկան՝ Գրականություն

Դասարանը՝ 9–րդ «ա»

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասին տեսակը՝ Ամփոփում

Դասի թեման՝ Պետրոս Դուրյան

Նպատակները՝

Ընդլայնել գիտելիքներ արևմտահայ պոեզիայի մասին

Ներկայացնել Դուրյանի դրաման,նրա սերը և տառապանքը

Դաստիարակել հայրենասիրություն,սեր և մարդկայնություն

Նպաստել,որ աշակերտներն ընկալեն բանաստեղծի հոգու ելևէջները

Օժանդակել աշակերտների մտքերի հստակ ձևակերպմանը

Զևավորել ունկնդրելու,մտքերի փոխանակման,միմյանց աջակցելու կարողություն

Վերջնարդյունքները՝

Սովորողը կկարողանա ինքնուրույն արտահայտել սեփական մտքերը

Պատկերացում կկազմի արևմտահայ գրականության մասին

Կկարողանա ներկայացնել գրողի կենսագրությունը

Կհամեմատի արևելահայ գրականության հետ

Կձևավորի հայրենասեր հայորդու և հայուհու արժեհամակարգ

Միջառարկայական կապ՝ Հայոց լեզու,Երաժշտություն,Կենսաբանություն

Խաչվող հասկացություններ՝

Կայունություն և փոփոխություն,

Պատճառ և հետևանք

Անհատներ հարաբերություններ

Ուսումնական նյութեր՝ դասագիրք, դիմանկար,պաստառ

Օգտագործվող հիմնական մեթոդը՝ «ԽԻԿ» համակարգ,«Պրիզմա»,հարց ու պատասխան,քառաբաժան

Դասի ընթացք

Խթանում–10 րոպե

Նախ անդրադառնալ **դրամա** բառին,դրա բազմիմաստությանը,սրանից բխող համանունությանը,պատճառներին և հետևանքներին։Կազմել «պրիզմա» «դրամա» բառով՝ նկատի ունենալով Դուրյանի աշխարհն ու ստեղծագործություններից բխող գաղափարները։



Իմաստի ընկալում(10 րոպե)

1.«Հարց ու պատասխանի» հնարի կիրառում։

ա.Ինրո՞ւ է ապշաց լճակը։

բ.Ի՞նչ է սիրելը Դուրյանի համար։

գ.Ինչպիսի՞ն է բանաստեղծի տրտունջքը։

դ.Ո՞րն է բանաստեղծի մեծագույն ցավը։

2.Սեղմ ներկայացնել Դուրյանին։

Կշռադատում(25 րոպե)

Դասարանը բաժանել 4 խմբի։Յուրաքանչյուրին հանձնարարել անդրադառնալ Դուրյան բանաստեղծություններից մեկին(«Լճակ»,«Սիրել»,«Տրտունջք»,«Իմ ցավը»)։Ներկայանել բանաստեղծի տրամադրությունը,խոհերը,բացատրել բառիմաստները,բառերի

կազմությունը,բառապաշարի առանձնահատկությունները։Արտասանել հատվածներ,նկարել հոգեվիճակին համապատասխան բնանկար։Գրատախտակին ներկայացնել «քառաբաժան» վարժությունը։Ստուգել աշխատանքները և կատարել փոխադարձ գնահատում։

Տնային աշխատանք՝ կրկնել անցածը, գրել շարադրություն «Դուրյանի դրաման» վերնագրով